ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

# SԵՂԵԿԱԳԻՐ ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И

НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

# СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК



Журнал издается с 5.01.1948 г. Выходит 4 раза в год

#### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ռ.Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (գլխավոր խմբագիր), Հ.Ա. ԹԵՐՉՅԱՆ (գլխ. խմբ. տեղակալ), Չ.Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Ս.Գ. ԱՂԲԱԼՅԱՆ, Ռ.Վ. ԱԹՈՅԱՆ, Վ.Վ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ, Ժ.Դ.ԴԱՎԻԴՅԱՆ, Ս.Պ. ԴԱՎԹՅԱՆ, Ս.Մ. ՂԱՉԱՐՅԱՆ, Ո.Չ. ՄԱՐՈՒԽՅԱՆ, ՅՈՒ.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Վ.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, Ս.Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, Մ.Գ. ՍՏԱԿՅԱՆ, Վ.Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

#### РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Р.М. МАРТИРОСЯН (главный редактор), А.А. ТЕРЗЯН (зам. глав. редактора),
З.К. СТЕПАНЯН (ответственный секретарь), С.Г. АГБАЛЯН,
Р.В. АТОЯН, В.В. БУНИАТЯН, Ж.Д. ДАВИДЯН, С.П. ДАВТЯН, С.М. КАЗАРЯН,
В.З. МАРУХЯН, Ю.Л. САРКИСЯН, В.С. САРКИСЯН,
С.О. СИМОНЯН, М.Г. СТАКЯН, В.С. ХАЧАТРЯН

#### EDITORIAL BOARD

R.M. MARTIROSSYAN (Editor-in-Chief), H.A. TERZYAN (Vice-Editor-in-Chief), Z.K. STEPANYAN (Secretary - in - Chief), S.G. AGHBALYAN, R.V. ATOYAN, V.V. BUNIATYAN, Zh.D. DAVIDYAN, S.P. DAVTYAN, S.M. GHAZARYAN, V.Z. MARUKHYAN, YU.L. SARGSYAN, V.S. SARKISSYAN, S.H. SIMONYAN, M.G. STAKYAN, V.S. KHACHATRYAN

Հրատ. խմբագիր՝

ԺԱՆՆԱ ՄԵՑՐԱՆՅԱՆ

Հս և ձևավորումը՝

Համակարգչային շարվածքը ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Խմբագիրներ՝

**ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ** ՆԵԼԼԻ ԱՆԱՆՅԱՆ

© Издательство ГИУА Известия НАН и ГИУ Армении (сер. техн. наук), 2008 ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2008. Т. LXI, № 1.

УДК 629.113

МАШИНОСТРОЕНИЕ

#### Г.В. МУСАЕЛЯН, Э.Ж. АРУТЮНЯН

# РАЗРАБОТКА РАСЧЕТНОЙ МОДЕЛИ КУЗОВА ЛЕГКОВОГО АВТОМОБИЛЯ МЕТОДОМ КОНЕЧНЫХ ЭЛЕМЕНТОВ

Разработана расчетная модель кузова легкового автомобиля методом конечных элементов (МКЭ). Исследованы ее прочность и жесткость в различных случаях нагрузок. Представлены особенности моделирования сварочных соединений составных частей кузова, несущего кузова и его структурных элементов, а также методы управления процедурой деления структуры на конечные элементы.

*Ключевые слова:* кузов легкового автомобиля, расчетная модель кузова, жесткость кузова, метод конечных элементов.

Ввиду сложной конструкции кузова постановка и решение расчетных задач его прочности и жесткости традиционными аналитическими методами связаны с большими трудностями. В автотракторной индустрии такие исследования в основном проводятся эмпирическими методами [1].

Целью настоящей работы является разработка расчетной модели кузова легкового автомобиля (МКЭ), что дает возможность при данных нагрузках вычислить в любой точке кузова деформации, напряжения и смещения [2].

Исследуемый кузов легкового автомобиля представляет собой сложную конструкцию, состоящую из различных структурных элементов, которые связаны между собой сваркой [3]. При разработке расчетной модели кузова упомянутым методом исследуемый объект представляется как система, состоящая из различных конечных элементов, которые связаны между собой в узлах. Составные части легкового автомобиля моделируются раздельно по отношению к местным системам координат, которые задаются с помощью общей глобальной системы координат Декарта.

В данной работе в качестве исследуемого объекта рассматривается несущий кузов легкового автомобиля ВАЗ 2106. Для его моделирования был использован программный пакет ANSYS 6.0 [4], позволяющий более точно смоделировать любые сопоставления поверхностей, плоскостей и линий с помощью операции логического сложения (булевы операции) [5].

Пол несущей конструкции представляет собой поверхность, состоящую из множества ребер жесткости [6]. Она моделируется с помощью пластинчатого элемента SHELL63. Выбранный конечный элемент дает возможность принять во внимание изгибательные и мембранные напряжения. К конечному элементу могут прилагаться нормальные и поверхностные нагрузки. Каждый узелэлемента SHELL63 (рис. 1) имеет по шесть степеней свободы: смещения в направлениях координатных осей x,y,z и вращения вокруг их.



Рис.1. Схема элемента SHELL63

Конечный элемент представлен в плоскости х-у. Для точного расчета элемента SHELL63 необходимо знать инерционный момент изгиба, который может быть введен или рассчитан от введенной величины толщины, а для оценки напряжений вводятся расстояния средней плоскости от крайних плоскостей. Обе эти величины положительные, учитывая, что средняя плоскость находится между краями. Если эти величины не заданы, то оценка напряжения дается на основе изначально данных толщин.

Моделирование целесообразно начать с пола. Необходимые продольные и поперечные жесткости пола обеспечивают продольные и поперечные ребра жесткости, которые связаны между собой сваркой. В данной модели маленькие радиусы кривизны не рассчитаны, так как они не имеют большого воздействия на общую жесткость автомобиля. Все величины, данные в модели, соответствуют реальному автомобилю. При моделировании пола несущего кузова наибольшую трудность представляет точное моделирование арок задних колес.

Лонжероны и багажник моделируются в соответствии с реальным видом структуры. В половой части багажника вместо реального сложного профиля моделируются соответствующие маленькие ребра жесткости, которые имеют одинаковое влияние на общую жесткость багажника. Углы изгиба стоек, радиусы соединений и все величины соответствуют реальному автомобилю. Все сварочные соединения узлов модели смоделированы как равенство смещений соответствующих узлов. Предполагается, что сварочные соединения жесткие и не деформируются.

В разработанной программе строения модели все основные величины, толщина пластин и нагрузки заданы с помощью переменных, что дает возможность использовать модель для исследования других автомобилей идентичного класса.

Полученная модель несущего кузова в автономном режиме делится на конечно-элементную сеть. Важное значение имеет надежность получения эффективной конечно-элементной сети объекта. Необходимо избегать конечных элементов с острыми углами. Программный пакет имеет возможность управления процессом деления объекта. После получения расчетной модели прилагаются процессы ввода действующих на нее нагрузок и крайних условий структуры. На рис.2 изображен вид разработанной модели.



Рис.2. Вид разработанной модели

Задача решена при различных случаях статических нагрузок. При этом принимаются во внимание нагрузки от собственных и эффективных масс автомобиля. Нагрузки от агрегатов, пассажиров и груза автомобиля приложены как распределенные нагрузки в соответствующих местах.

После ввода крайних условий осуществляется решение полученной расчетной задачи. В итоге получаются распределения смещений в узлах конечных элементов. Далее вычисляются деформации, напряжения и другие величины каждого конечного элемента.

В результате решения задачи реализована оценка жесткости и прочности несущей конструкции. Выведены распределения полей напряжений в кузове, а также наиболее опасные участки, где можно разгрузить конструкцию с помощью разных конструкторских приемов.

В работе представлено распределение смещений. Выведены наиболее деформированные участки. Рассмотрено несколько случаев, из которых особый интерес представляет кручение кузова, которое появляется, когда одно из колес автомобиля лишается опоры (рис.3). В упомянутом случае выводятся те участки, где необходимо произвести конструктивные мероприятия. На рис.3 изображен вид деформированного автомобиля.



Рис 3. Вид деформированного автомобиля в случае кручения

В данном случае нагрузки одной из опасных частей несущего кузова является опора мотора (траверса). Распределение смещений по продольной оси траверсы приведено на рис.4.



В горизонтальной оси приведена длина траверсы (L), а в вертикальной оси - величины смещений. Как видно из графика, смещения распределены крайне неравномерно.

На рис.5 цветовым полем приведены распределения смещений по всей несущей конструкции.



Рис 5. Цветовое поле распределения смещений

Итак, разработанная модель дает возможность вывести весь процесс деформирования кузова, особенности распределения напряжений и деформации, опасные участки кузова в разных случаях нагрузок.

#### СПИСОК ЛИТЕРАТУРЫ

- 1. Кац А.М. Автомобильные кузова. –М.: Транспорт, 1980. 272 с.
- 2. Зенкевич О. Метод конечных элементов в технике. -М.: Мир, 1975. 541 с.
- 3. Pippert H. Karosserietechnik. Vogel Verlag, 1998.- 303 s.
- 4. Muller G. FEM fur Praktiker. Expert Verlag, 1997.- 859 s.
- 5. **Մուսայելյան Գ.Վ.** Վերջավոր տարրերի մեթոդների կիրառումը տրանսպորտային միջոցներում։ ուսումնական ձեռնարկ / ՀՊՃՀ. Երևան, 2003. 289 էջ։
- 6. **Мусаелян Г.В., Закарян Л.О.** Исследование изгиба рамы грузового автомобиля в вертикальной плоскости методом конечных элементов // Известия НАН РА и ГИУА. Сер. ТН. 2006. Т. 59, N3.- С. 465-471.

ГИУА. Материал поступил в редакцию 20.09.2007.

#### Գ.Վ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ, Է.Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ԿՐՈՂ ԹԱՓՔԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ՄՇԱԿՈՒՄ ՎԵՐՋԱՎՈՐ ՏԱՐՐԵՐԻ ՄԵԹՈԴՈՎ

Կատարվել է մարդատար ավտոմոբիլի կրող թափքի հաշվարկային մոդելի մշակում վերջավոր տարրերի մեթոդով, հետազոտվել են վերջինիս ամրությունն ու կոշտությունը տարբեր բեռնվածքների դեպքում։ Ներկայացվում են թափքի բաղկացուցիչ տարրերի եռակցման կետերի, կրող թափքի և վերջինիս բարդ կառուցվածքային տարրերի մոդելավորման առանձնահատկությունները, վերջավոր տարրերի ցանցի բաժանման գործընթացի կառավարման եղանակները։

**Առանցքային բառեր**. մարդատար ավտոմոբիլի թափք, թափքի հաշվարկային մոդել, թափքի կոշտություն, վերջավոր տարրերի մեթոդ։

#### G.V. MUSAYELYAN, E.J. HARUTYUNYAN

#### CONSTRUCTION OF COMPUTATIONAL MODEL OF AN AUTOMOBILE BODY BY METHOD OF FINITE ELEMENTS

By the method of finite elements the construction of the computational model of an automobile body and investigation of its solidity and stiffness during different cases of loads is developed. The features of modelling welding connections, the body and its structural elements and management of partition into finite elements are represented.

*Keywords*: automobile body model, computation model of body, stiffness of an automobile body, finite-element method.

#### ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2008. Т. LXI, № 1.

ՀՏԴ 621.762+669.15

ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

#### Վ.Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ժ.Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆ, Ք.Լ. ՉԱՔԱՐՅԱՆ, Ն.Ն. ՀԱԿՈԲՅԱՆ, Մ.Լ. ՍԱՍՈՒՆՑՅԱՆ

## ՌՈԻՏԻԼԻՑ ԱԼՅՈՒՄԻՆԱԹԵՐՄԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՏԻՏԱՆԻ ԱԼՅՈՒՄԻՆԻԴՆԵՐԻ ԿԱՌՈԻՑՎԱԾՔԱԳՈՑԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱԽՎԱԾ ՎԵՐԱԿԱՆԳՆԻՉԻ ՔԱՆԱԿԻՑ

Քննարկվել է ռուտիլից ալյումինաթերմային վերականգնման եղանակով տիտանի ալյումինիդների ստացման գործընթացը և հետազոտվել են ստացված համաձուլվածքների կառուցվածքագոյացման հարցերը` կախված վերականգնիչի քանակից։ Ցույց է տրվել, որ վերականգնիչի որոշակի քանակների դեպքում կարելի է ստանալ միաֆազ TiAl կամ TiAl<sub>3</sub>։ Ստացված արդյունքները հաստատագրվել են ռենգենակառուցվածքային, մանրադիտակային և ջերմագրային վերլուծության եղանակներով։

*Առանցքային բառեր.* կառուցվածքագոյացում, ալյումինիդ, ալյումինաթերմային, ռուտիլ, տիտան, վերականգնում։

ժամանակակից մետալուրգիայի գերակա ուղղություններից մեկը նոր կառուցվածքով և հատկություններով համաձուլվածքների ստացումն է, ինչպիսիք են օրինակ տիտանի այլումինիդները (TiAl և TiAl<sub>3</sub>), որոնք ունեն բազմաֆունկցիոնայ բնույթ, աչքի են ընկնում բարձր արժեքավոր ամրությամբ, կոռոզիոն կայունությամբ, մաշակայունությամբ և այլ հատկություններով։ Տիտանի ալյումինիդները մոտ ապագայում կարող են լուրջ մրցակից լինել նիկելի և այլ մետաղների այլումինիդներին, քանի որ ավելի թեթև են, կարիք չունեն այլ, ավելի թանկ մետաղներով լեգիրման և ավելի դիմացկուն են բարձրջերմաստիճանային օքսիդացման նկատմամբ։ Այդպիսի համաձուլվածքների ստացման համար որպես հումք է ծառայում մաքուր տիտանը, որի ստացումը ժամանակակից վառարանային եղանակով ինչպես ռուտիլից, այնպես էլ հայոգենիդներից թանկ է, էներգատար և պահանջում է թանկ իներտ գազեր` արգոն և հելիում։ Մինչդեռ ավելի արդիական է այդ ինտերմետայիդների ստացումը ժամանակակից, կատարելագործված և էժան տեխնոլոգիաներով։ Այդ տեսակետից ալյումինիդների ստացման արդյունավետ տեխնոլոգիա է համարվում Ա.Գ. Մերժանովի և նրա գիտական դպրոցի կողմից հայտնաբերված բարձրաջերմաստիճան ինքնատարածվող սինթեզը (ԲԻՍ), որը բնութագրվում է իր ցածր էներգածախսերով, օգտագործված սարքավորումների պարզությամբ, էժանությամբ, գործընթացի արագ ընթացքով և սինթեզված արգասիքի մաքրությամբ։ ԲԻՍ մետայուրգիայի օրինակ է դժվար վերականգնվող տիտանի միացություններից տիտանի այլումինաթերմային վերականգնումը, որը կարելի է իրագործել անվառարան՝ այդ նպատակի համար օգտագործելով ռուտիլը, որը տիտանի ամենաէժան միացությունն է [1-3]։

Աշխատանքի նպատակն է` կախված վերականգնիչի քանակից, ռուտիլից ստանալ մոնոֆազ TiAl և TiAl₃և ուսումնասիրել ստացված ինտերմետալիդների կառուցվածքագոյացման հարցերը։ Փորձերի համար որպես ելանյութ ծառայել է 96% ТіО<sub>2</sub>, 1,5% Fe<sub>2</sub>O<sub>3</sub> և 2,5% SiO<sub>2</sub> բաղադրությամբ ռուտիլը, որպես վերականգնիչ՝ քիմիապես մաքուր ալյումինը՝ 99.9% մաքրությամբ և որպես հարուցիչ՝ Ті+С փոշեխառնուրդը։

Ըստ նախնական հաշվարկների՝ որոշակի հարաբերությամբ ընտրած բովախառնուրդը ամեն անգամ մանրամասն խառնվել է և տեղավորվել ավազի շերտով պատված գրաֆիտա-շամոտային տարողության մեջ։ Բովախառնուրդի կենտրոնում կոնական փոս է արվել և ավելացվել հարուցիչը։ Ապա շիկացած լարով սկիզբ է դրվել բարձրաջերմաստիճան ինքնատարածվող սինթեզին, որը տևել է 10...12 *րոպե*։ ԲԻՍ գործընթացի շնորհիվ զարգացել են բարձր ջերմաստիճաններ (2000...2500(C)։ Այդ պայմաններում մետաղները վերականգնվել են և առաջացրել համաձուլվածք, իսկ խառնուրդ օքսիդները առաջացրել են խարամային ֆազ։ Սառչելուց հետո ատացված արգասիքները կշռվել են և ենթարկվել քիմիական, ռենտգենաֆազ և մանրադիտակային վերլուծության։

Ուսումնասիրվել է մետաղական ֆազի ելքի կախումը վերականգնիչի քանակից (նկ.1)։ Ինչպես երևում է նկարից, վերականգնիչի՝ տեսականորեն անհրաժեշտ քանակից ավել լինելու դեպքում կորը ստանում է ծոված մաքսիմումով տեսք, ընդ որում՝ կորությունը ընկած է 10...50% ալյումինումի ավելցուկի սահմաններում։ Մակայն ամենաբարձր ելքը ստացվում է վերականգնիչի 25% տեսական քանակից ավելցուկի դեպքում։



Նկ.1. Մետաղի ելքը (1) և Ti-ի պարունակությունը համաձուլվածքում (2)՝ կախված վերականգնիչի տեսական անհրաժեշտ քանակի ավելցուկից

Այդ պայմաններում ստացված համաձուլվածքը, ըստ քիմիական վերլուծության տվյալների, պարունակել է 64% Ti և 36% Al, որը ատոմային տոկոսներով մոտավորապես համապատասխանում է 50%Ti և 50% Al-ի` այսինքն TiAl մետաալյումինիդին (նկ.2)։



Նկ.2. Ti-Al վիձակի դիագրամը

Կատարվել են նաև ջերմային ռեժիմների ուսումնասիրություններ, որոնք թույլ են տալիս հետևել բարձրաջերմաստիձան ինքնատարածվող գործընթացով տիտանի ալյումինիդների սինթեզի դինամիկային ջերմային պայթման պայմաններում։ Ուսումնասիրությունները կատարվել են նիքրոմային լարով տաքացվող մետաղական գլանաձև ռեակտորում, որն արտաքինից ունի ազբեստյա մեկուսիչ շերտ։

Ջերմաստիձանը չափվել է երկու քրոմել-ալյումել ջերմազույգերի օգնությամբ, որոնցից մեկն ընկղմվել է բովախառնուրդի մեջ, իսկ մյուսն ամրացվել է ռեակտորի արտաքին պատին։ Բովախառնուրդն էլեկտրականությամբ աստիձանաբար տաքացվել է մինչև պայթումը, ապա տաքացումը դադարեցվել է։ Տվիչը ջերմազույգերի ջերմաստիձանային ինֆորմացիան տեղափոխել է համակարգիչ, որում և կատարվել է ջերմային գրանցումը։ Կատարվել են վերը նշված բաղադրությամբ բովախառնուրդի ջերմային ռեժիմների ուսումնասիրություններ՝ ալյումինումի տարբեր պարունակությունների դեպքում։

Նկ. 3-ում ներկայացված է Ti-Al համարժեք բաղադրությամբ արգասիքի սինթեզի ջերմագիրը, 25% Al-ի տեսականորեն անհրաժեշտ քանակից ավելցուկի դեպքում։



Նկ.3. Ti-Al համակարգի ջերմագրային հետազոտությունը, 25% Al-ի տեսականորեն անհրաժեշտ քանակից ավելցուկի դեպքում

Ջերմագրից պարզ է դառնում, թե տաքացման որ փուլում է տեղի ունենում վերջնական արգասիքի ձևավորումը։ Այդ գործընթացը տեղի ունի առավելագույն ջերմաստիձանում, որից հետո սկսում են առաջանալ այն հավասարակշռային վիձակները, որոնք կան Ti-Al ֆազային դիագրամում (նկ. 2)

Ըստ դիագրամի՝ 50% Ti և 50 Al% (ըստ ատոմային տոկոսների) ընկած է հոմոգեն (γ լուծույթի տիրույթում։ Այդ տիրույթն ըստ Կուբաշենսկու և Դենչի [4] համապատասխանում է 55-65% ( ըստ զանգվածային տոկոսների) Ti-ին և ունի գոյացման մեծ ջերմություն, այսինքն՝ այդ համաձուլվածքը ջերմաքիմիական տեսակետից ամենակայունն է։

Նկ. 4-ում ներկայացված է TiAl ինտերմետալիդի ռենտգենագիրը, որը հաստատում է մոնոֆազ արգասիքի ստացումը։



Նկ.4. 25 % Al-ի տեսականորեն անհրաժեշտ քանակից ավելցուկի դեպքում ստացված համաձուլվածքի ռենտգենագիրը

Ուսումնասիրվել է նաև 45...65% Al (ըստ զանգվածի) ավելցուկով համաձուլվածքի ստացման գործընթացը (դիագրամում՝ γ+TiAl₃ տիրույթը)։ Այս պայմաններում ստացվում է TiAl₃ համաձուլվածքը։ Համաձուլվածքը պարունակում է 64 % Al-ին և 36 % Ti։ Ի տարբերություն TiAl-ի, այս դեպքում համաձուլվածքը կառուցվածքով ավելի փխրուն է և ծակոտկեն։

Նկ. 5-ում ներկայացված է TiAl<sub>3</sub>–ի ստացման ջերմագիրը։



Նկ.5. Ti- Al համակարգի ջերմաչափական հետազոտությունը Al-ի 60 %՝ տեսականորեն անհրաժեշտ քանակից ավելցուկի դեպքում

Ինչպես երևում է նկարից, համաձուլվածքի սինթեզը տեղի է ունենում ոչ անմիջապես, այլ երբ ջերմաստիձանը հասնում է առավելագույն արժեքին։ Վերջնական արգասիքն անցնում է այն բոլոր հավասարակշռային վիճակներով, որոնք կան վիճակի դիագրամում։ Վերջնական արգասիքում չի նկատվում Al-h ավելցուկի անջատում, րնթանում է սառեցում։ Արգասիքը այլ համապատասխանում է TiAl<sub>3</sub> բաղադրությանը։ Սակայն սինթեզված համաձույվածքը հագեցած է Al-ի ատոմներով և անկայուն է (մետաստաբիլ)։ Այսպիսով, TiAl<sub>3</sub>-ի ստացման համար պետք է ժամանակը երկարացնել։ Այդ ժամանակահատվածում տեղի է ունենում ֆազային կազմի ռելաքսացիա, մետաստաբիլ վիմակից դեպի հավասարակշիռ վիճակը` դիֆուզիոն վերաբյուրեղացման ֆազի անցման միջոցով։

Նկ. 6-ում պատկերված է 64% Al-ի տեսականորեն անհրաժեշտ քանակությանից ավելցուկի դեպքում ստացված համաձուլվածքի ռեգտենակառուցվածքային վերլուծության արդյունքը։



Նկ.6. 64% Al-ի տեսականորեն անհրաժեշտ քանակից ավելցուկի դեպքում ստացված համաձուլվածքի ռենտգենագիրը

Կատարվել են նաև ջերմածանրագրային ուսումնասիրություններ` Al-ի 75% ավելցուկ քանակության համար (դիագրամում TiAl<sub>3+</sub> Al տիրույթը)։ Քննարկվել է 75% Al-ի ավելցուկի դեպքում ստացված ջերմագիրը։

Ջերմագրի կառուցվածքը էապես տարբերվում է վերը նշված դեպքերից։ Այստեղ երևում են երկու մաքսիմումներ, որոնք հաստատում են ֆազագոյացման ավելի բարդ մեխանիզմը։ Հետաքրքիր է, որ ստացված արգասիքն այստեղ նույնպես մոնոֆազ է։



Նկ.7. Ti-Al համակարգի ջերմագիրը Al-ի 75% ըստ տեսականորեն անհրաժեշտ քանակից ավելցուկի դեպքում

Մտացված արդյունքի պատձառը բացատրվում է հետևյալ կերպ. բովախառնուրդի ջերմաստիձանն առավելագույն կետին հասնելուց հետո, տեղի է ունենում երկու հակադիր գործողությունների՝ քիմիական ռեակցիայով պայմանավորված ջերմատվության և կառուցվածքագոյացմամբ պայմանավորված ջերմակլանման գործընթացների ջերմությունների մրցակցություն, հետևաբար՝ գումարային ջերմաստիձանի անկում։ Այնուհետև սկսում է գերակշեռել հիմնական ֆազի ստացումը։



Նկ.8. Ti-Al համակարգի ռենգենագիրը, Al-ի 75% ըստ տեսականորեն անհրաժեշտ քանակի ավելցուկի դեպքում

Վերջինս ջերմագրի վրա առաջացնում է երկրորդ մաքսիմումը (նկ.7)։ Ապա սկսվում է սառեցումը։ Ռենտգենագրում (նկ.7) ստացված արգասիքը նման է նկ.4-ի դեպքին, այն մոնոֆազ է, բայց իր բաղադրության մեջ ունի նաև չվերականգնված TiO (նկ.8)։ Տարբեր քիմիական բաղադրություն ունեցող համաձուլվածքները, որոնք ստացվել են տարբեր

քանակի Al-ի պարունակությունների պայմաններում, ենթարկվել են միկրոկառուցվածքային և մանրադիտակային հետազոտությունների։ Պատրաստվել են միկրոշլիֆներ։ Խածատման հեղուկը բաղկացած է եղել 25% ֆտորաջրածնական թթվից (48%-անոց լուծույթ), 25% ազոտական թթվից (խիտ) և 50% գլիցերինից [4]։ Այս հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ թթվածնի առկայությունը համաձուլվածքում թույլ չի տալիս Ճիշտ բնութագրել համաձուլվածքի միկրոկառուցվածքը։

60% Al-ի պարունակության դեպքում համաձուլվածքում արտահայտված երևում է շերտային կառուցվածք (նկ.9)։



Նկ.9. Ti-Al համակարգի միկրոկառուցվածքը (x200)։ Բաց գծերը γ ֆազն են, մուզը` α+TiO



Նկ.10. Ti-Al համաձուլվածքի միկրոկառուցվածքը. 75 % Al-ի ըստ տեսականորեն անհրաժեշտ քանակի ավելցուկի դեպքում

Ըստ որոշ գիտական տվյալների [5]՝ այդ գծերը կապված են ( ֆազի մեջ TiO-ի ներկայության հետ։ Այսպիսի համաձուլվածքը համեմատաբար փխրուն է։ Al-ի քանակի մեծացումը մինչև 75 %, ըստ տեսական անհրաժեշտ քանակի, հանգեցնում է համաձուլվածքի փխրունության մեծացմանը։ Դա առաջացնում է դժվարություններ նաև շլիֆների պատրաստման գործընթացներում (շլիֆները հղկելիս մակերեսի որոշ մասերը ներկվում էին)։ Միկրոկառուցվածքի ուսումնասիրությունը թույլ տվեց բացատրել փխրունության պատձառը։ Պարզվել է, որ ամբողջ համաձուլվածքը կտրատվում է բազմաթիվ մազանման ձեղքվածքներով (նկ.10)։

Ընդ որում՝ որքան է Al-ի քանակը ավելանում է, այնքան համաձուլվածքը դառնում է ավելի փխրուն, և այդ մազանման ձեղքերն ավելանում են և հակառակը, որքան համաձուլվածքը հարուստ է Ti-ով, այնքան մեծ է մեխանիկական ամրությունը, և միկրոկառուցվածքը հոմոգեն է, իսկ լուծված թթվածնի քանակը համաձուլվածքում քիչ է։

Al-ի 25% տեսականորեն անհրաժեշտ քանակից ավելցուկի դեպքում ստացվում է ամենակայուն համաձուլվածք՝ ամենամեծ ամրությամբ, և անջատվում է ջերմության ամենամեծ քանակությունը։

Al-ի այդ ավելցուկ քանակը համապատասխանում է հետևյալ հավասարմանը.

$$\text{TiO}_2 + \frac{4}{3}\text{Al} = \frac{2}{3}\text{Al}_2\text{O}_3 + \text{Ti.....}$$
 (1)

Եթե հաշվարկը տարվում է ըստ հետևյալ ռեակցիայի՝

$$TiO_2 + \frac{7}{3}Al = \frac{2}{3}Al_2O_3 + TiAl....$$
 (2)

ապա Al-ի` վերը նշված քանակը տեսական քանակից պակաս է (86,6 %)։

Սակայն Al-ի քանակի ավելացումը չի բերում տիտանի ելքի մեծացմանը համաձուլվածքում։ Հետևաբար, Al-ի այդ քանակը բավարարում է ամբողջ TiO<sub>2</sub>-ի վերականգնմանը՝ ըստ (2) հավասարման։ Այսինքն՝ այդ բանաձևը շատ թե քիչ համապատասխանում է համաձուլվածքի ստացմանը, ըստ Ti-ի տեսական քանակի։ Սակայն խարամն այս դեպքում արտաքին տեսքով անգամ նման չէ Al<sub>2</sub>O<sub>3</sub>-ի։ Նրանում կան լուծված ձևով Ti –ի չվերականգնված օքսիդներ, որի պատձառով այն ստանում է մուգ գույն։ Ընդ որում՝ կախված Al-ի քանակի մեծացումից խարամի գույնն անընդհատ փոփոխվում է, հետևաբար չի կարելի խարամի բաղադրությունն արտահայտել որևէ բանաձևով։

25 % Al-ի ավելցուկի դեպքում, ըստ (1) հավասարման, ստեղծվում են թերմոդինամիկական տեսակետից ամուր համաձուլվածքի ստացման պայմաններ։ Այս դեպքում խարամը կարելի է ներկայացնել q Al<sub>2</sub>O<sub>3</sub>, pTiO<sub>2</sub>, և zTiO բանաձևով։ Ti-ի կորզման աստիձանը համաձուլվածքում այս դեպքում ամենամեծն է։

Այսպիսով, կատարված հետազոտությունների արդյունքներից եզրակացնում ենք, որ հնարավոր է բովախառնուրդում Al-ի քանակը կարգավորելով ստանալ TiAl և TiAl₃ համաձուլվածքներ, որոնք ունեն տարբեր միկրոկառուցվածք և ամրություն։ Սակայն ավելի արդյունավետ է 25 % Al-ի ավելցուկի պայմաններում ստանալ մոնոֆազ TiAl բանաձևով համաձուլվածք, որն ունի ամուր միկրոկառուցվածք և Ti-ի կորզման աստիձանը համաձուլվածքում ամենամեծն է։

#### СПИСОК ЛИТЕРАТУРЫ

- Евстигнеев В.В., Филимонов В.Ю., Яковлев В.Н., Семенчина А.С. Способ управления микроструктурностью продукта синтеза при реализации в системе Ti-Al //В сб.: Функциональные порошковые материалы и покрытия.- Пермь, 2004.-Вып.N2.- С.60-62.
- 2. Эверхарт Д.Л. Титан и его сплавы. М.: Металлургиздат, 1956.
- **3.** Мурач Н.Н., Верятин У.Д. Внепечная металлургия.- М.: Металлургиздат, 1956.
- 4. Kubachew ski O., Dench W. A. Act Metallurgia.- 1955. VII, V3, N4. P. 339-356.
- 5. Bumps E. S., Kessler H. D., Hansen M. Transactions of American Society of Metals.- 1973.- V. 45.-P.1008-1025 (пер. сб. «Тіtан». - М.: Изд-во ИЛ ,1972. - С.202-219).

ՀՊՃՀ։ Նյութը ներկայացվել է խմբագրություն 20.03.2007։

#### В.А. МАРТИРОСЯН, Ж.Г. ГУКАСЯН, К.Л. ЗАКАРЯН, Н.Н. АКОПЯН, М.Э. САСУНЦЯН

#### ИССЛЕДОВАНИЕ СТРУКТУРООБРАЗОВАНИЯ В СИСТЕМЕ Ті-A1 В ЗАВИСИМОСТИ ОТ КОЛИЧЕСТВА ВОССТАНОВИТЕЛЯ ПРИ АЛЮМИНОТЕРМИЧЕСКОМ ВОССТАНОВЛЕНИИ РУТИЛА

Обсуждаются вопросы получения алюминидов титана при алюминотермическом восстановлении рутила. Проводится исследование структурообразования в зависимости от количества восстановителя. Выяснилось, что при определенных условиях можно получить TiAl или TiAl<sub>3</sub> в зависимости от количества восстановителя. Полученные результаты подтверждаются данными рентгеноструктурного и термографического анализа.

*Ключевые слова:* структурообразование, алюминид, алюминотермический, рутил, титан, восстановление.

#### V.A. MARTIROSYAN, Zh.H. GHUKASYAN, K.L. ZAKARYAN, N.N. HAKOPYAN, M.E. SASUNTSYAN

#### STRUCTURAL FORMATION STUDIES IN THE TI-AI SYSTEM DEPENDING ON REDUCER QUANTITY FOR ALUMINOTHERMY RUTILE REDUCTION

Problems of obtaining aluminothermy reduction of rutile and structural formation studies depending on reduction quantity are discussed. It is found out that in certain conditions TiAl or TiAl<sub>3</sub> can be obtained depending on reduction quantity. The results obtained agree with the data of X-ray crystal and thermographic analysis.

Keywords: structural formation, aluminide, aluminothermy, rutile, titanium, reduction.

#### ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2008. Т. LXI, № 1.

<u> Հ</u>ՏԴ 621.762.2

ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

#### Ս.Գ. ԱՂԲԱԼՅԱՆ, Ա.Ա. ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ, Տ.Գ. ԱՓՈՅԱՆ, Ա.Ն.ՂԱՉԱՐՅԱՆ

#### ՀԵՄԱՏԻՏԱՅԻՆ ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ԹՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ՍԻԼԻԿԱՏԱԱՌԱՋԱՑՄԱՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Դերիվատոգրաֆիական մեթոդով ուսումնասիրվել է հեմատիտային հանքաքարերի թրծման գործընթացը ածխածնի և սոդայի առկայությամբ։ Ցույց է տրված, որ սոդայի առավելագույն ազդեցությունը ստացվում է 10%-ի դեպքում, որը նպաստում է վերականգնման գործընթացի արագացմանը և հնարավորություն է ստեղծում ձերբազատվել տարբեր տեսակի սիլիկատային և այլ միացություններից։ Ուսումնասիրվել են նաև սիլիկատաառաջացման ռեակցիաները, որոնք ընթանում են թրծման ժամանակ վերականգնման գործընթացին զուգահեռ։

*Առանցքային բառեր.* հեմատիտ, հանքաքար, նատրիումի կարբոնատ, բովախառնուրդ, թրծում, սիլիկատաառաջացում, դիֆուզիա, վերականգնում, երկաթի օքսիդ։

Ժամանակակից մետալուրգիական արտադրությանը ներկայացվող կարևորագույն պահանջներից է նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ հանքահումքային ռեսուրսների համալիր օգտագործումը, որը կապահովի ոչ միայն հանքանյութերում գտնվող արժեքավոր բաղադրատարրերի կորզումը, այլն կստեղծի անթափոն արտադրություն և կլուծի բնապահպանական խնդիրներ։

Հայաստանի Հանրապետությունը, ունենալով գունավոր, հազվագյուտ և ազնիվ մետաղների պարունակությամբ հանքավայրեր, որոնց պաշարները անսպառ չեն, խիստ կարևորում է հանքանյութերի և խառնուրդների համալիր օգտագործումը անթափոն արտադրության ստեղծումով, այդ թվում նաև երկաթի կորզումը, որն անրաժեշտ է ոչ միայն պողպատի և ֆերոհամաձուլվածքների արտադրության, այլ նաև երկաթափոշու ստացման և կոմպոզիցիոն նյութերի արտադրության զարգացման համար։

Այս առումով կարևորագույն խնդիր է երկաթի հեմատիտային հանքաքարերի մշակումը և երկաթափոշու ստացումը։ Հարցի լուծման դժվարությունն այն է, որ հեմատիտը (Fe<sub>2</sub>O<sub>3</sub>) պարամագնիսական ֆազ է և հնարավոր չէ այն կորզել հանքաքարից՝ մագնիսական տարանջատման միջոցով։

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ածխածնի և նատրիումի կարբոնատի մասնակցությամբ երկաթի հեմատիտային հանքաքարերի թրծման (վերականգնման) գործընթացը և սիլիկատաառաջացման ռեակցիաների ընթացքը, որոնց արդյունքում ստացվում են ֆերոմագնիսական ֆազեր, այդ թվում մագնետիտ (Fe<sub>3</sub>O<sub>4</sub>) և մաքուր երկաթ (երկաթի սպունգ)։

Նշված գործընթացի ուսումնասիրման համար կատարվել են համալիր դերիվատոգրաֆիական հետազոտություններ Q-1500D դերիվատոգրաֆի վրա, որի էլեկտրոնային ինքնագրող սարքը միանգամից գրանցում է ջերմաստիձանի (T), զանգվածի (TG), զանգվածի փոփոխման արագության (DTG) և հետազոտվող նմուշի ջերմունակության (DTA) կախվածությունը ժամանակից ու ջերմաստիձանից։

Փորձերը կատարվել են 0...15% սոդա և 4...5% գրաֆիտ պարունակող բովախառնուրդի վրա, 25...1200ºC ջերմաստիձանային միջակայքում։ Նկ.1.-ում ցույց է տրված 5% սոդա պարունակող նմուշի դերիվատոգրամ։ Ինչպես երևում է, նկ.1.-ից, DTA կորի վրա առաջին մինիմումն առաջանում է ~130°C-ի դեպքում և վերարտադրվում է սոդայի քանակությունից անկախ։ Գործընթացն ուղեկցվում է ջերմության կլանումով և նմուշի զանգվածի նվազումով։ Սա բացատրվում է ադսորբցված խոնավության հեռացումով։ Հաջորդ մինիմումը նույնպես բնորոշ է տարբեր բաղադրություն ունեցող բովախառնուրդներին և գրանցվում է DTA և DTG կորերի օգնությամբ՝ 576 $\pm$ 7°C ջերմաստիձանում։ Գործընթացն ընթանում է 540...650°C միջակայքում և բացատրվում է վերականգնման առաջին փուլով՝ Fe<sub>2</sub>O<sub>3</sub>  $\rightarrow$  Fe<sub>3</sub>O<sub>4</sub>։ Ջերմաստիձանի բարձրացումը մինչև 650...790°C ջերմաստիձաներ առաջ է բերում DTA կորի վրա նոր մինիմում՝ 750°C -ում, որը բացատրվում է խտանյութի մեջ եղած խառնուկների հետ սոդայի փոխազդեցությամբ՝

 $Na_2CO_3 + SiO_2 \rightarrow Na_2SiO_3 + CO_2\uparrow,$ 

 $Na_2CO_3+Al_2O_3 \rightarrow Na_2 Al_2O_4+CO_2\uparrow$ :

Միաժամանակ արագանում են վերականգնման երկրորդ փուլի ռեակցիաները՝  $Fe_3O_4 \rightarrow FeO$ : Այն իրականացվում է ինչպես պինդ ֆազային դիֆուզիոն մեխանիզմի՝  $Fe_3O_4+C \rightarrow FeO+CO^{\uparrow}$ , այնպես էլ գազային ֆազի մեխանիզմի համաձայն՝  $Fe_3O_4+CO \rightarrow FeO+CO_2^{\uparrow}$ : Սոդայի 5%-ոց կոնցենտրացիան համապատասխանում է բաղադրատարրերի ստեխիոմետրիկ քանակությանը, որը լիովին բավարար է խտանյութի խառնուկների հետ փոխազդելու համար։ 790...900℃ ջերմաստիՃանային միջակայքում գրանցվում է ևս մեկ մինիմում, որը նույնպես վերաբերում է Fe<sub>3</sub>O<sub>4</sub>  $\rightarrow$  FeO գործընթացին և ըստ երևույթին նաև FeO  $\rightarrow$  Fe գործընթացին։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ սոդայի պարունակության ա $\Delta$ ին զուգընթաց Fe $_3O_4 \rightarrow$  FeO  $h \text{FeO} \rightarrow \text{Fe}$ արագությունը մեծանում է։ Դա բացատրվում է սոդայի և վերականգնման երկաթի օքսիդը, խառնուկների փոխազդեցությամբ, որի արդյունքում անջատվելով միացություններից, լրացուցիչ մասնակցում է վերականգնման գործընթացին` մեծացնելով վերականգնման արագությունը։ FeO → Fe վերականգնման երրորդ փուլն ընթանում է 900...1000ºC-ում։ Դերիվատոգրամների վրա վերականգնման այս փուլը բացատրվում է DTA և DTG կորերի էքստրեմումով (970ºC), իսկ TG կորերի վրա առաջանում է որոշակի արագությամբ զանգվածի փոփոխություն։ Մինչև 5% սոդայի պարունակության դեպքում նկատվում է վերականգնման վերջնական ջերմաստիձանի և տևողության կտրուկ նվազում։ 10% սոդա պարունակող բովախառնուրդի համար 🛛 վերականգնման վերջնական ջերմաստիձանը 130...150ºC-ով 🛛 ցածր է առանց սոդալի բովախառնուրդի վերականգնման ջերմաստիձանից։ Բացի դրանից, 20%-ով կրձատվում է վերականգնման ժամանակը։ 3% և ավելի սոդա պարունակող բովախառնուրդների մոտ DTA կորերի վրա 1100ºC-ում առաջացած վերջին մինիմումը բացատրվում է երկրորդային պինդ ֆազային ռեակցիաներով՝

$$Na_2SiO_3+Na_2Al_2O_4 \rightarrow 2Na_2O \quad Al_2O_3 \quad SiO_2$$

3CaO 
$$Al_2O_3+2Al_2O_3 \rightarrow (CaO Al_2O_3)$$
:

Մոդայի հիմնական նշանակությունն այն է, որ բովախառնուրդի թրծման ընթացքում այն, փոխազդեցության մեջ մտնելով խտանյութի մեջ եղած խառնուրդների հետ, առաջացնում է ջրում լուծելի և անլուծելի միացություններ, որոնք հեշտությամբ հեռացվում են թաց մագնիսական տարանջատման ժամանակ։ Այս տեսակետից շատ կարևոր է սիլիկատաառաջացման պինդ ֆազային ռեակցիաների հետազոտումը։



Նկ.1. 5% Na<sub>2</sub>CO<sub>3</sub> պարունակող բովախառնուրդի դերիվատոգրամ՝ 1, 1'- նմուշի ջերմաստիձանի փոփոխման ընթացքն է տաքացման (1) և սառեցման (1(( ժամանակ; 2, 3, 4 – ը նմուշի տաքացման ժամանակ համապատասխանաբար դիֆերենցիալ ջերմային անալիզի (DTA), զանգվածի փոփոխության (TG) և զանգվածի փոփոխության արագության (DTG) կախվածություններն են ջերմաստիձանից, իսկ 2', 3', 4'-ը նույն կախվածություններն են նմուշի սառեցման ժամանակ

Պինդ վիճակում ընթացող ռեակցիաների մեխանիզմը առայժմ ամբողջությամբ ուսումնասիրված չէ։ Նշենք, որ սահմանափակող օղակը անկասկած դիֆուզիոն գործընթացն է, որն ըստ Ֆիկի հավասարման [2] ՝

$$J=D\nabla C_{i}, \qquad C_{i}=D\Delta C, \qquad (1)$$

(2)

իսկ ջերմային կախումը ըստ Արրենյուսի հավասարման [3]`
$$D(T)=D_0 \exp(-E/RT),$$

որտեղ J-ն հոսքի խտության վեկտորն է, մոլ.սմ<sup>-2</sup>.վ<sup>-1</sup>, D-ն՝ դիֆուզիայի գործակիցը,  $\nabla$ , Δ-ն՝ համապատասխանաբար Համիլտոնի և Լապլասի օպերատորները, C<sub>i</sub>-ն՝ կոնցենտրացիայի փոփոխությունը միավոր ժամանակում, C-ն՝ կոնցենտրացիան, E-ն՝ դիֆուզիայի ակտիվացման էներգիան, իսկ D<sub>0</sub>-ն հաստատուն է։ Մակերևութային դիֆուզիան սովորաբար ընթանում է 3...4 կարգով ավելի մեծ արագությամբ, քան ծավալայինը, որն ազդում է C, D<sub>0</sub> և E մեծությունների վրա։ Ռեակցիայի արագությունը նույնպես գրվում է Արրենյուսի հավասարումով՝

$$K = A \exp[-W/RT], \qquad (3)$$

որտեղ K-ն հաստատուն է, A-ն՝ ստերիկ գործոնը, W-ն՝ ակտիվացման էներգիան։ Ընդհանուր առմամբ, սիլիկատաառաջացման պինդ ֆազային ռեակցիաների արգասիքը AB նյութն է, որը կազմավորվում է A-ի (սոդայի) և B-ի (խառնուրդների) փոխազդեցության հետևանքով։ Այս դեպքում A-ն դիֆուզվում է B-ի մեջ AB շերտի միջով աննշան փոքր արագությամբ, քան A-ի և B-ի միջև քիմիական ռեակցիայի արագությունն է։ Հետևապես դիֆուզիան լիովին բնութագրում է գործընթացի կինետիկան։

Ընդունենք, որ A և B մասնիկները ռեակցիայի սկզբնական պահին ունեն V<sub>0</sub> և V ծավալներ և ռեակցիան սկսվելուց որոշ ժամանակ անց նրանց համապատասխանում են S<sub>0</sub> և S մակերևույթները։ Այս դեպքում նրանց զանգվածները համապատասխանաբար կկազմեն PV<sub>0</sub> և PV։ Եթե ընդունենք, որ dx ժամանակում ռեակցիան գնում է B մասնիկի մեջ dx խորությամբ, որը համապատասխանում է PV -ի, ապա կստանանք՝

$$PdV = PSdx$$
,  $V_0 - V = \int_0^x Sdx$ :

B-ի վերափոխման աստիձանը միավոր բաժիններով կարող է արտահայտվել  $\lambda = (V_0 - V)/V_0$  կամ `

$$\frac{d\lambda}{d\tau} = \frac{d\left(\frac{V_0 - V}{V_0}\right)}{d\tau} = \frac{S}{V_0} \cdot \frac{dx}{d\tau}, \qquad \frac{d\lambda}{d\tau} = \frac{S_0}{V_0} \cdot \frac{S}{S_0} \cdot \frac{dx}{d\tau}, \qquad (4)$$

 ${S_0\over V_0}$  հարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ` $S_0=1$ 

$$\frac{S_0}{V_0} = \frac{1}{\phi\delta}$$

որտեղ  $\phi$ -ը ձևի գործակիցն է (գնդի համար հավասար է 1/3, խորանարդի համար՝ 1/6 և այլն), իսկ  $\delta$ -ն՝ շերտի նվազագույն հաստությունը։  $\frac{S}{S_0}$  հարաբերությունը B-ի վերափոխման աստիձանի ֆունկցիա է։ Այդ ֆունկցիայի բացահայտ տեսքը տարբեր է և կախված է մասնիկի ձևից։ Այսպես, գնդի համար

$$\frac{S}{S_0} = \sqrt[3]{(1-\lambda)^2} = \frac{r^2}{r_0^2}, \qquad \lambda = 1 - \left(\frac{r_0 - x}{r_0}\right)^3, \tag{5}$$

որտեղ r-ը արգասիքի մասնիկի ընթացիկ շառավիղն է։

Ենթադրելով, որ B մասնիկներն ունեն սֆերիկ ձև և սիլիկատաառաջացման գործընթացը նկարագրելու համար օգտագործելով Յանդերի հավասարումը կստանանք ՝

$$\tau = K \left( 1 - \sqrt[3]{1 - \lambda} \right)^2, \tag{6}$$

$$\mathbf{K} = \frac{\mathbf{r}_0^2}{2\mathbf{K}_1}, \qquad \mathbf{K}_1 = \frac{\mathbf{D}}{\varepsilon} \mathbf{C}_1, \tag{7}$$

որտեղ K-ն հաստատուն է՝ կախված արգասիքի հատկություններից և գործընթացի պայմաններից, Kı-ը հաստատուն է, որը բնութագրում է գործընթացի դիֆուզիոն ռեժիմը, տ-ն՝ մասնիկի սկզբնական շառավիղն է, D-ն՝ դիֆուզիայի գործակիցը A → AB միջակայքում,  $\mathcal{E}$  =pn/M` համեմատականության գործակից է, P-ն՝ տեսակարար կշիռը, M-ը՝ AB-ի մոլեկուլային կշիռը, ո-ը՝ ռեակցիայի ստեխիոմետրիկ գործակիցը։

$$C_1 = rac{M(x)}{4\pi D} \cdot rac{x}{r_0(r_0 - x)}$$
 - նյութի կոնցենտրացիան է A-AB բաժանման սահմանի վրա,

որտեղ M(x)-ը A նյութի քանակն է, որը միավոր ժամանակի ընթացքում դիֆուզվում է AB շերտի միջով որոշակի x խորությամբ։

(6) հավասարման համապատասխան ձևափոխումից և ինտեգրումից հետո կստանանք՝

$$d\lambda \left(\frac{1 - \sqrt[3]{1 - \lambda}}{\sqrt[3]{(1 - \lambda)^2}}\right) = \frac{3K_1}{r_0^2} d\tau, \qquad (8)$$
  
$$\sqrt[3]{1 - \lambda + \frac{1}{2}} \sqrt[3]{(1 - \lambda)^2} = \frac{K_1}{r_0^2} \tau - C, \qquad (9)$$

որտեղ C-ն ինտեգրման հաստատուն է։ Սկզբնական պայմաններում, երբ  $\lambda$ =0 և r=0, այն հավասար է 3/2։

Համատեղ լուծելով (5), (7), և (9) հավասարումները, կստանանք՝

$$\tau = \left[ K \left( 1 + \frac{r}{r_0} \right)^2 \right]:$$
 (10)

(6) և (10) հավասարումները տալիս են սիլիկատաառաջացման պինդ ֆազային ռեակցիաների դիֆուզիոն գործընթացների ձևական նկարագրությունը, որոնք բնութագրվում են ակտիվացման նվազ էներգիայով։ Փորձնական եղանակով  $\lambda = f(r, \tau)$  ֆունկցիայի որոշման փորձերը, և հետևապես, (6) և (10) հավասարումների գործնական օգտագործումը ցանկալի արդյունքներ չեն տալիս, որովհետև մոդելային փորձերը (Na<sub>2</sub>CO<sub>3</sub> սիլիկատներ) չեն վերարտադրում իրական գործընթացը։ Սակայն Na<sub>2</sub>CO<sub>3</sub>-SiO<sub>2</sub> և Na<sub>2</sub>CO<sub>3</sub>-Al<sub>2</sub>O<sub>3</sub> խառնուրդների համար, որոնք ենթարկվել են սինթեզի 750°C ջերմաստիձանում, նշված հավասարումների ձշտությունը հաստատվում է արգասիքների վերափոխման փոքր աստիձանի համար։ Այսպես, երբ Na<sub>2</sub>CO<sub>3</sub>:SiO<sub>2</sub>=1:1 (ֆրակցիա - 0,50 *մ*մ) և  $\tau$  =0,5...1,0 *մամ*, ըստ փորձի λ <sub>ψ</sub>=0,13...0,25, ըստ հաշվարկի λ<sub>h</sub>=0,10...0,23, այն դեպքում, երբ λ<sub>φ</sub>≥0,5, ապա λ<sub>h</sub>-ի նշանակությունը անհամատեղելի է։ Համենայն դեպս, (10) բանաձևը հետաքրքրություն է ներկայացնում և հետագա ուսումնասիրման անրաժեշտություն ունի։

700...1100°C ջերմաստիձանային միջակայքում վերականգնված բովախառնուրդի արգասիքների միներալոգիական անալիզը ցույց է տալիս, որ ընթացող սիլիկատաառաջացման պինդ ֆազային ռեակցիաների հետևանքով առաջանում են հետևյալ տիպի միացությունները՝ Na<sub>2</sub>SiO<sub>3</sub>, Na<sub>2</sub>Al<sub>2</sub>O<sub>4</sub>, CaO ·2Al<sub>2</sub>O<sub>3</sub>, Ca<sub>2</sub>SiO<sub>4</sub>, Mg<sub>2</sub>SiO<sub>4</sub>, 2MnOSiO<sub>2</sub>, Al<sub>2</sub>TiO<sub>5</sub>, CaCr<sub>2</sub>O<sub>4</sub>, 2Na<sub>2</sub>O ·Al<sub>2</sub>O<sub>3</sub> ·SiO<sub>2</sub>, 3CaO ·Na<sub>2</sub>O ·3Al<sub>2</sub>O<sub>3</sub>, Na<sub>2</sub>MgSiO<sub>4</sub>, որոնք հաստատում են երկակի (սկզբնական 700...800°C) և եռակի (900...1100°C) երկրորդային ռեակցիաների համակարգերը, որոնց հետևանքով կազմավորվում են սիլիկատներ, ալյումինատներ, ալյումասիլիկատներ և այլ բարդ կոմպլեքսներ՝

$$\begin{split} &Na_2CO_3+SiO_2 \rightarrow Na_2SiO_3+CO_2, \\ &Na_2CO_3+Al_2O_3 \rightarrow Na_2Al_2O_4+CO_2, \\ &Na_2SiO_3+Na_2Al_2O_4 \rightarrow 2Na_2O\bar{E}Al_2O_3\bar{E}SiO_2, \\ &Ca_2SiO_4+Mg_2SiO_4 \rightarrow Ca_2MgSiO_4, \\ &FeS+Na_2O+C \rightarrow Fe+Na_2S+CO, \\ &FeO\bar{E}SiO_2+Na_2CO_3 \rightarrow FeO+Na_2SiO_3+CO_2, \\ &FeO\bar{E}Al_2O_3+Na_2O+C \rightarrow Fe+Na_2Al_2O_4+CO: \end{split}$$

Ինչպես ցույց է տալիս ռենտգենաֆազային վերլուծությունը, հատիկավորված բովախառնուրդների վերականգնման գործընթացում 1000...1050ºC ջերմաստիՃանում տեղի է ունենում պինդ ֆազային ռեակցիաների վերածածկում (առաջնային և երկրորդային)։

Նկ.2-ում ցույց է տրված ելանյութային խտանյութի (1), վերականգնված սպունգի (2) և երկաթափոշու (3) ռենտգենագրամները։

Ռենտգենագրաֆիական անալիզները կատարվել են ДРОН-2,0 դիֆրակտոմետրի վրա` պղնձի  $K_{\alpha+\beta}$  ճառագայթումով, հետևյալ ռեժիմներով` պատրաստուկի լուսակայման ժամանակ պտտման արագությունը իր հարթության մեջ եղել է ո=30 *պտ/рոպե*, Գեյգերի հաշվիչի պտտման արագությունը -1<sup>0</sup>/*рոպե*, նկարահանման ռեժիմը` V=6 *կՎ*, J=10 *մԱ*, ճեղքի բացվածքը` 0,5 *մմ*. Ուժգնությունը գնահատվել է 100 բալանոց սանդղակով։

հնչպես երևում է ռենտգենագրամից, խտանյութի մեջ չեն հայտնաբերվել մեծ քանակությամբ խառնուրդներ (նմուշ 1)։ Հիմնական ֆազերն են՝ մագնետիտը (α=2,862 Å) և հեմատիտը (Nd)։ Մպունգի մեջ (նմուշ 2) բացի հիմնական  $\alpha$  - Fe ֆազից, ցայտուն երևում են շպինելներ և սիլիկատեր (Na<sub>2</sub>SiO<sub>3</sub>), ալյումինատներ (Na<sub>2</sub>O·Al<sub>2</sub>O<sub>3</sub>), և ալյումինասիլիկատներ՝ նեֆելինների տեսքով  $\alpha$  - Na(AlSiO<sub>4</sub>)։ Գոյություն ունի նաև ազատ վիձակում որոշակի քանակի Na<sub>2</sub>O, որին համապատասխանում է d/n=2,55 Å և d/n=1,805 Å ։ Երկաթափոշու մեջ (նմուշ 3) բացի  $\alpha$  - Fe, որի  $\alpha$  =2,862 Å, ոչ մի այլ մաքսիմում չի հայտնաբերվել, որը հաստատում է ստացված երկաթափոշու մաքրության աստիձանը։



Նկ. 2. Խտանյութի (1), վերականգնված սպունգի (2) և երկաթափոշու (3) ռենտգենագրամներ

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Мальян Д.Э., Агбалян С.Г. и др. Дериватографическое исследование газотранспортных реакций в порошковых смесях железа с хлоридом аммония // Порошковая металлургия. - Киев, 1992.-N 9.-С. 78-83.
- 2. **Анциферов В.Н.** и др. Взаимная диффузия и гомогенизация в порошковых материалах.-М.: Металлургия, 1988.-151с.
- **3**. **Гуров К.П., Карташкин Б.А.** Взаимная диффузия в многофазных металлических системах.-М.: Наука, 1981.- С.320-332.

ՀՊՃՀ։ Նյութը ներկայացվել է խմբագրություն 20.05.2006։

#### С.Г. АГБАЛЯН, А.А. ФРАНГУЛЯН, Т.Г. АПОЯН, А.Н. КАЗАРЯН

#### ИССЛЕДОВАНИЕ ПРОЦЕССОВ ОТЖИГА ГЕМАТИТОВЫХ РУД И СИЛИКАТООБРАЗУЮЩИХ РЕАКЦИЙ

С помощью дериватографического метода исследованы процессы отжига гематитовых руд при наличии углерода и соды. Показано, что наиболее сильное влияние соды на процесс восстановления происходит при ее 10%-ом содержании, что способствует ускорению восстановительного процесса и дает возможность освободиться от разных силикатных и других соединений. Исследованы также реакции силикатообразования, которые имеют место во время отжига параллельно с процессом восстановления.

*Ключевые слова:* гематит, руда, карбонат натрия, смесь, отжиг, силикатообразование, диффузия, восстановление, оксид железа.

#### S.G. AGHBALYAN, A.A. FRANGULYAN, T.G. APOYAN, A.N. KHAZARYAN

# INVESTIGATION OF THE ANNEALING PROCESS OF HAEMITITE ORES AND SILICATE FORMATING REACTIONS

By means of derivative-graphical methods the process of annealing haematite ores with carbon and soda are examined. It is shown that the strongest influence of soda on the process of reduction takes place at 10% amount of the latter promoting the acceleration of the reduction and is given an opportunity to rack off different silicate and other impurities. The reactions of silicate formation happening during annealing process simultaneously with the reduction process have also been studied. *Keywords:* haematite, ore, sodium carbonate, compound, annealing, silicate formation, diffusion, reduction, iron oxide. ISSN 0002-306Х. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2008. Т. LXI, № 1.

УДК 622.274

ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

#### Ս.Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գ.Ա. ԱՌԱՔԵԼՈՎ

# ԲԱՑԱՀԱՆՔԻ ԿՈՂԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ԹԵՔ ԵՎ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՆՔԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հետազոտության հիմնական նպատակը բացահանքերի կողերի ձևավորման նոր եղանակի մշակումն է, որը հնարավորություն է ընձեռում առանց լրացուցիչ մակաբացման ծավալների հեռացման հասնել վերջինիս կողերի առավել մեծ կայունության` կողի պրոֆիլի ձևափոխման շնորհիվ։ Տրված են առաջարկվող եղանակով բացահանքի կողերի ձևավորման կարգը և հիմնական պարամետրերի հաշվարկման մեթոդիկան։ *Առանցքային բառեր.* բացահանք, բացահանքի ոչ աշխատանքային կող, բացահանքի կողի կայունություն, փլուզման պրիզմա, սահքի մակերևույթ, կողերի ամրակապում, մակաբացման ապարներ, եզրագծային պայթեցում։

Բացահանքի ոչ աշխատանքային կողերի թեքման անկյունների վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնցից կարևորներն են՝ հանքավայրի ինժեներաերկրաբանական պայմանները, բացահանքի վերջնական խորությունը, ծառայման ժամկետը, մշակման տեխնոլոգիան, կողերը ձևավորող ապարների ֆիզիկա-մեխանիկական հատկությունները և այլն։

Նշված բոլոր գործոններն այս կամ այն ձևով ազդում են ապարները բնութագրող որոշակի պարամետրերի վրա (հիմնականում ապարների կապակցվածության և ներքին շփման անկյան), որոնք ընկած են բացահանքի կողերի թեքման անկյունների որոշման բոլոր հաշվարկային մեթոդների հիմքում [1,2]:

Սակայն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան [3], ոչ բոլոր դեպքերում է, որ հաշվարկային վերոհիշյալ մեթոդներն ապահովում են համապատասխան Ճշտություն, քանի որ դրանցում հաշվի չի առնվում ժամանակի գործոնը։ Դրա հետևանքով շատ բացահանքերում տեղի են ունեցել կողերի կամ նրանց առանձին տեղամասերի փլուզումներ։ Հայաստանում տարբեր տարիներին տեղի են ունեցել փլուզումներ Սոթքի, Ագարակի և բոլորովին վերջերս՝ Ջրվեժի, իսկ ԱՊՀ-ի տարածքում «Վոլչանսկի», «Ալմալիկսկի»,«Օլենեգորսկի», «Կովդորսկի», «Կոստոմուշսկի», «Մեդվեժի Ռուչեյ», «Նորիլսկի Նիկել» և «Պեչենեգ Նիկել» ԼԿՄ-ի բացահանքերում։

Պրակտիկան ցույց է տալիս նաև, որ տեղի ունեցող փլուզումները առաջացել են հիմնականում բացահանքի ոչ աշխատանքային կողերի վերևային տեղամասերում, որտեղ լեռնային աշխատանքները վաղուց ավարտվել են։ Սա խոսում է այն մասին, որ փլուզումների հիմնական պատՃառը տարբեր գործոնների ազդեցության տակ ժամանակի ընթացքում ապարային զանգվածի նախնական հատկությունների փոփոխություններն են։

Հաձախ կողերի կայունությունն ապահովելու և փլուզումները կանխելու նպատակով իրագործվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ բացահանքի կողերի թույլ տեղամասերի ամրակապում, կողերի կայունության հաշվառմամբ վերջինիս մշակման կարգի ընտրություն, եզրագծային պայթեցման օգտագործում և

այլն։ Սակայն, նշված միջոցառումների կիրառումը, ինչ-որ չափով մեղմացնելով փլուզման

վտանգը, այն չի բացառում։

Այդ պատՃառով էլ անհրաժեշտ է բացահանքի շահագործման ժամանակ ընտրել վերջինիս ոչ աշխատանքային կողերի ձևավորման այնպիսի կառուցվածք (կոնստրուկցիա), որի դեպքում ապարային զանգվածի այն ծավալները, որոնցում տեղի են ունենում սկզբնական հատկությունների փոփոխություններ, պարբերաբար ենթարկվեն հեռացման, ինչը և առաջարկվում է մեր կողմից [4]։

Առաջարկված եղանակի էությունը, որի համար ստացված է հեղինակային իրավունք, հետևյալն է. բացահանքը (նկ.1), որի վերջնական եզրագծերի մոտ ցույց են տրվում փլուզման պրիզմայի սահմանները (a), ըստ բարձրության բաժանվում է երկու մասի՝ վերևի (H<sub>4</sub>) և ներքևի (H<sub>4</sub>)։ Վերևի մասի մշակումը կազմակերպվում է այնպես, որ ձևավորվող ոչ աշխատանքային կողերը մակերևույթի կողմից ընդգրկում են փյուզման պրիզմայի սահմանններն ամբողջությամբ։ Անհրաժեշտ է նշել, որ նման դեպքերում փլուզման պրիզմայից մակաբացման ապարների հեռացումը պետք է կազմակերպվի այնպես (այսինքն` բացահանքի ներքևի մասի մշակմանը զուգընթաց), որպեսզի բացահանքի ոչ աշխատանքային կողերի ձևավորումը բացահանքի ամբողջ խորությամբ հնարավորինս կատարվի միաժամանակ, ինչի շնորհիվ էլ կվերացվի փլուզման վտանգը։ Քանի որ նշված ձևով մշակման ժամանակ մեծանում է բացահանքի վերևի մասից հեռացվող դատարկ ապարների ծավալը (ΔV վ), ապա ներքևի մասի մշակման դեպքում ոչ աշխատանքային կողերի թեքման անկյունները պետք է վերցնել այնպիսին, որպեսզի նույն մեծությամբ (ΔV<sub>4</sub>) փոքրանա հեռացվող դատարկ ապարների ծավալը կամ վերևի և ներքևի մասերում մակաբացման գումարային ծախսերը մնան հաստատուն։ Իսկ ներքևի մասում բացահանքի ոչ աշխատանքային կողերի թեքման անկյունների առավելագույն մեծությունները (Yumax) պետք է ապահովեն այդ կողերում թողնվող համապատասխան բերմաների նվազագույն մեծությունների տեղադրումը։



Նկ.1. Բացահանքի կողի ձևավորման նոր եղանակի հաշվարկման սխեմա

Այսպիսով, բացահանքի վերևի մասում կողը մշակվում է նախագծայինի համեմատ ավելի սակավաթեք անկյան տակ (үч< ү), իսկ ներքևի մասում՝ ավելի զառիթափ (уч≤утах>у)։ Վերևի մասից հեռացվում է ակտիվ Ճնշման պրիզման, իսկ

ներքևում ստեղծվում է հզոր հենման պրիզմա։ Բացահանքի կողը ստանում է բեկյալ պրոֆիլ (ANC) ավանդական հարթ պրոֆիլի (AC) փոխարեն։ Ինչ վերաբերում է բացահանքի կողերին ներքևի մասում, ապա դրանց կայունությունը մեծ փոփոխություններ կրել չի կարող , քանի որ դրանց ձևավորման ժամանակը կարձ է, իսկ այդ տեղամասերի ապարները ավելի կայուն են։

Բացահանքի ոչ աշխատանքային կողերի ձևավորման առաջարկվող եղանակի տնտեսական արդյունավետությունը կապահովվի հետևյալ պայմանի դեպքում

$$\Delta V_{\mathfrak{l}} C_{\mathfrak{l}} \leq \Delta V_{\mathfrak{b}} C_{\mathfrak{b}} , \qquad (1)$$

որտեղ  $\Delta V_{u}$ -ն բացահանքի ներքևի մասում չհանվող (թողնվող) մակաբացման ապարների ծավալն է,  $u^3$ ,  $\Delta V_{u}$ -ն բացահանքի վերևի մասում լրացուցիչ հանվող փլուզման պրիզմա կազմող մակաբացման ապարների ծավալը,  $u^3$ , Cu–ն ներքևի հորիզոններից 1  $u^3$  մակաբացման ապարների հեռացման վրա կատարվող ծախսերի մեծությունը,  $\eta p/u^3$ , Cu–ն վերևի հորիզոններից 1  $u^3$ մակաբացման ապարների հեռացման վրա կատարվող ծախսերի մեծությունը,  $\eta p/u^3$ :

Ընդհանրապես, C<sub>4</sub> > C<sub>4</sub>, քանի որ բացահանքի ներքևի հորիզոններից 1 *մա* մակաբացման ապարների հեռացման համար կատարվող ծախսերն ի հաշիվ տեղափոխման Ճանապարհի մեծացման ( $\Delta$ L) ավելի մեծ են։ Այդ պատՃառով էլ հնարավոր է, որ  $\Delta$ V<sub>4</sub> <  $\Delta$ V<sub>4</sub>: Պետք է նշել, որ ավտոմոբիլային տրանսպորտի օգտագործման դեպքում Cն =Cվ (1+0,45  $\Delta$ L/ L), իսկ երկաթգծային տրանսպորտի դեպքում Cն =Cվ (1+0,35  $\Delta$ L/ L) :

Բացահանքի վերևի և ներքևի տեղամասերի բարձրությունները (H<sub>4</sub> և H<sub>b</sub>) որոշվում են` ելնելով վերջինիս վերևի մասից մակաբացման լրացուցիչ ծավալների և ներքևի մասում թողնվող ծավալների հեռացման համար պահանջվող ծախսերի հավասարության պայմանից, (1)։ Հաշվարկման սխեման ունի նկ.1-ում բերված տեսքը։

Առաջին հերթին որոշվում է փլուզման պրիզմայի այն ծավալի մեծությունը, որը նախատեսված է հեռացնել բացահանքի մշակման ժամանակ։ Նշված ծավալը բացահանքի մեկ միավոր երկարության դեպքում կազմում է

$$\Delta V_{\rm q} = \frac{\mathrm{a}H_{\rm q}}{2}, \ u^3: \tag{2}$$

Այնուհետև որոշվում է բացահանքի ներքևի մասից չհեռացվող մակաբացման ապարների ծավալը, որը, ելնելով (1) պայմանից, կազմում է

$$\Delta V_{\mathfrak{g}} = \frac{\Delta V_{\mathfrak{g}} C_{\mathfrak{g}}}{C_{\mathfrak{g}}}, \quad u^{\mathfrak{g}}:$$
(3)

Մյուս կողմից, բացահանքի մեկ միավոր երկարության դեպքում

$$\Delta V_{g} = \frac{ADx}{2}, \ u^{3}, \tag{4}$$

որտեղ x-ը ընդունված H<sub>l</sub>-ի դեպքում ներքևում ստացվող AND եռանկյան այն բարձրությունն է, որի դեպքում ապահովվում է (3) պայմանը։ AD-ն ΔAND եռանկյան հիմքն է։

Համապատասխան արժեքները տեղադրելով (3) հավասարման մեջ` կստանանք.

Ավտոտրանսպորտի օգտագործման դեպքում

$$X = \frac{\left[2H_{p} \cdot (1 - \operatorname{ctg}\gamma \cdot \operatorname{tg}(\gamma + \rho)/2) - 2H_{90}\right] \cdot H_{q} \cdot \sin\gamma}{\left(H_{p} - H_{q}\right) \cdot \left(1 + 0.45\Delta L/L\right) \cdot \left[\operatorname{ctg}\left(45^{\circ} - \rho/2\right) + \operatorname{tg}\left((\gamma + \rho)/2\right)\right]},$$
(5)

երկաթգծային տրանսպորտի օգտագործման դեպքում

$$X = \frac{\left[2H_{p} \cdot (1 - \operatorname{ctg}\gamma \cdot \operatorname{tg}(\gamma + \rho)/2) - 2H_{90}\right] \cdot H_{q} \cdot \sin\gamma}{\left(H_{p} - H_{q}\right) \cdot \left(1 + 0.35\Delta L/L\right) \cdot \left[\operatorname{ctg}\left(45^{\circ} - \rho/2\right) + \operatorname{tg}\left((\gamma + \rho)/2\right)\right]},$$
(6)

